ԷՊԻՄ. ԿԱՅՈՒՆԱՑՆԵԼ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԼՈՒԾԵԼ ՊՐՈԲԼԵՄԸ

Բոլորովին իմաստ չունի ըստ լարվածության չափի մարզը գոտիների բաժանելը: Բարձր լարվածություն է տիրում ամենուրեք: Ամենախաղաղ անկյունն անգամ պատրաստ է անսպասելի բռնկվել:

Մարտակերտի շրջանում հուլիսի 10-17-ը տեղի ունեցած իրադարձությունները լավագույն ապացուցում են, որ խաղաղությունը, կայունությունը այս ամբողջ ընթացքում խաբուսիկ, երևութական էին, որ ընդերքում եռում էին կրքերը: Դեպքերը հանկարծակի արագությամբ հաջորդեցին միմյանց, այնպիսի արագությամբ, որ իրավապահպան մարմինները, հատուկ դրության զինվորական կարգախմբերը ուղղակի չհասցրին, չկարողացան կանխել դրանք: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ հուլիսի 10-ին Աղդամը փակեց Ստեփանակերտի հետ շրջանի հաղորդակցության ճանապարհները: Նույն օրը Աղդամի շրջանում հարձակում գործեցին միլիցիայի Մարտակերտի շրջանային բաժնի տեսուչ Նորայր Դանիելյանի և Մարտակերտի երկու ուրիշ քննիչների վրա:

ՊԱՏԺԵԼ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻՆ

Դանը օր էր:

Հուլիսի 11: Առանց ներքին գործերի շրջանային բաժնի հետ հանձնաժողովի մեկնելու Միրքաշիրից շարասյուն բերեցին Մարտակերտ՝ Քյալբաջար անցկացնելու համար: Աղաբեկայինջ գյուղի տակ քարկոծեցին շարասյունը: Ռեակցիան սկսվեց... Հուլիսի 12-ի առավոտյան Բաշգյուղեփտալա-Կիչան ճանապարհահատվածում գտան Լենինավանի բնակիչ (նախկին բազմամարտիկ) Արթուր Սուրենի Տոնյանի դիակը ու ջարդված մեքենան: Քրեական գործ է հարուցված շրջանային դատախազության կողմից: Քննությունը գնում է:

Հուլիսի 13: Ղազանչի գյուղի բնակիչ Լևոն Մարտիի Աղաջանյանի մեքենան Մարտակերտից տուն գնալու ճանապարհին Աղդամի շրջանի Ղարաչիլար գյուղում քարկոծել են: Լ. Աղաջանյանը մարմնամբ վնասվածք է ստացել: Քարկոծողները հայտնի են:

Հուլիսի 14: Ներքին գործերի շրջանային բաժին մտած ահազանգով՝ քարկոծում են անցնող մեքենաները, միլիցիայի և զինվորական կարգախմբերը շտապեցին Սրխավենդ: Կարգը պահպանելու համար ժամանած միլիցիայի կարգախումբը գյուղում դիմադրության հանդիպեց: Ընդհարման հետևանքով մարմնական վնասվածքներ ստացան բոլոր երեքը՝ միլիցիայի ավագ լեյտենանտ, տեղամասային տեսուչ Արմենակ Խաչատուրի Գրիգորյանը, միլիցիայի լեյտենանտ, տեղամասային տեսուչ Ղարիբ Մամեդ օղլի Ավդերդինը, միլիցիայի ավագ լեյտենանտ, քրեական հետաքննության օպեր-լիազոր Ֆաիրադին Իմրան օղլի Թաքիրովը:

Նույն օրը Մռավ սարի իրենց արոտավայրերը գնալու ճանապարհին, Աղդաբան գյուղում Քյալբաջարի շրջանի պարեկատան ծառայողների կողմից կալանվել ու Քյալբաջար են տարվել Զափար գյուղի ոչ բնակիչներ՝ այդ թվում՝ Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ Գ. Սարգսյանը: Միայն շրջանի ղեկավարության և ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության պատասխանատու աշխատողների ջանքերի շնորհիվ չափարցիները հուլիսի 16-ին քերվեցին Ստեփանակերտ: Ինչպես հայտնեց ներքին գործերի մարզային վարչության պետ Ռ. Թումանյանցը, հայտնի չեն կալանավորման մոտիվները, պատճառները: Սպասում են փաստաթղթերին, որ պիտի ստանան ներքին գործերի Քյալբաջարի շրջանային բաժնից:

Հուլիսի 15-ին և 16-ին Մարտակերտի շրջանի Մանիքլու, Բաշգյուղեփտալա, Սրխավենդ, Օրթափալա, Խաչամբերի գյուղերում հայտնվել են հարևան ադրբեջանական շրջանների միլիցիայի աշխատողներ՝ իբրև թե ադրբեջանական գյուղերի բնակիչների անվտանգությունը ապահովելու, հասարակական կարգը պահպանելու համար, առանց ներքին գործերի շրջանային բաժնի գիտության, համաձայնության ու թույլտվության: Ըստ շրջաբաժնի պետ Վ. Ավագիմյանի, հարևանների նման օգնության կարիքը շրջանը բոլորովին չէր զգում: Ավելին, նրանց ներկայությունը ապակայունացրել է դրությունը Մարտակերտում: Մանավանդ որ տեղի ունեցած իրադարձությունները առանց այն էլ ստեղծել էին նոր լարվածություն: Վերջին տասը միայն մեծացրեց հավանական ու ամենաանհավանական լուրերի շրջապտույտը:

Հուլիսի 17-ին այդ, այսպես ասած, «օգնական ուժերը» հանվեցին շրջանից:

Սակայն ո՞վ է հրավիրել «վարդապահ» այդ ուժերին, կամ ո՞ւմ կողմից են նրանք մարզ մուտք գործել: Դա մեզ չհաջողվեց պարզել:

Ձնաբուքի սրված, չափազանց բարդ քաղաքական իրավիճակին, գյուղատնտեսական աշխատանքները շրջանում շարունակվում են: Բերքահավաք է բանջարանոցներում, մի քանի օրից այգեկութը կսկսվի: Իրացնելը պրոբլեմ է: Բերքը փչանում է... ճանապարհները փակ են, վտանգաշատ, մեքենաներ չկան: Հուլիսի 16-ին բանջարեղենով բեռնված մեքենաների շարասյունը զրահատանքների ուղեկցությամբ է հասցվել Ստեփանակերտ:

Ցորենը չի մատակարարվում հերուկ գազով: Մինչդեռ Թարթառի ջրերը շարունակում են ոռոգել հարևան ադրբեջանական շրջանների դաշտերը, այգիները, բանջարանոցները: Միրքաշիր քաղաքը խմելու ջուր է ստանում Մարաղա գյուղի տարածքում խփված արտեզյան ջրհորներից:

Ձնագունը գլորվում է: Մինչ չե՞ն ուր, թե մինչև ե՞րբ... Դժվար է կանխագուշակելը: Մի բան պարզ է: Պետք կանխել դեպքերի դժվար կառավարվող ընթացքը: Դրության կայունացումը շրջանում գերխնդիր է:

Լ. ՏԱՐՍՅԱՆ